Հ. Ա. ԱԴԻԲԵԿՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՆԵՈՊՈԶԻՏԻՎԻԶՄԸ ԵՎ Ա. ԷՅՆՇՏԵՅՆԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից նեոպոզիտիվիզմը արդի բուրժուական փիլիսոփայության ամենատարածված հոսանքներից մեկն է։ Ի տարբերություն իդեալիզմի մյուս տարատեսակությունների, նեոպոզիտիվիզմն ավելի է հարմարվում ստեղծված պայմաններին և բնական գիտությունների նվաճումներին։ Իր կեղծ չեզոքությամբ նա ավելի ու ավելի է թափանցում բնական գիտությունների մեջ և բացասաբար ներգործում արևմտյան մտավորականության լայն խավերի աշխարհայացքի վրա։

Բնական գիտությունների և մասնավորապես, ֆիզիկայի ասպարեզում իդեալիզմի և մատերիալիզմի պայքարը ընդգրկում է պրոբլեմների լայն շրջանակ։ Այս հոդվածում մենք կլուսաբանենք միայն հարաբերականության տեսության մեկնաբանման հարցերում մատերիալիզմի և նեոպոզիտիվիզմի միջև եղած հակադրությունը, հիմնականում կանգ առնելով ժամանակակից նեոպոզիտիվիզմի նոր մեթոդոլոգիայի, ինչպես նաև իդեոլոգիական պայքարի նրա գնահատականի վրա։

Հայտնի է, որ մատերիայի և գիտակցության փոխհարաբերության հարցի լուծումը սերտորեն շաղկապված է շարժման կատեգորիայի հետ։ Շարժումն իր հերթին կապված է ժամանակի և տարածության կատեգորիաների հետ։ Փիլիսոփայության հիմնական հարցի տարբեր լուծումները հանգեցնում են ժամանակի և տարածության երկու հակադիր ըմբռնման։ Փիլիսոփայական իդեալիզմի բոլոր տարատեսակները այս կամ այն նկատառումով ժխտել են դրանց օբյեկտիվությունը։ Ժամանակի և տարածության նրանց պատկերացումներն ըստ էության հենվում են այդ կատեգորիաների Նյուտոնյան սահմանափակ պատկերացումների վրա։

Ճշտելով և զարգացնելով ժամանակի և տարածության դասական մեխանիկայի ըմբռնումը, հարաբերականության տեսությունը նոր հիմք ստեղծեց այդ կատեգորիաների սուբյեկտիվ իդեալիստական մեկնաբանման քննադատության համար։ Չնայած դրան, իդեալիզմի տարբեր ներկայացուցիչներ օգտագործել են այդ տեսությունը մատերիալիզմի դեմ պայքարելու համար։ Դրանցից կարելի է հիշատակել ինտուիտիվիստ Ա. Բերգսոնին, նեոկանտական Է. Կասիրերին, նեոպոզիտիվիստ Մ. Շլիկին և մյուսներին։ Մ. Շլիկը, օրինակ, այդ տեսության մեկնաբանման ընթացքում ժխտում էր դաշտի նյութականությունը, ֆիզիկական եռաչափ տարածության օբյեկտիվությունը։ Ժամանակակից նեոպոզիտիվիզմը թեև չի կրկնում այս արդեն միամիտ հնչող փաստարկները, սակայն նույն եռանդով սուբյեկտիվորեն է մեկնաբանում այդ տեսության եզրակացությունները։

Հարաբերականության տեսության առաջին աստիճանը՝ մասնակի հարաբերականության տեսությունը, ելնում է էյնշտեյնյան երկու սկզբունքներից։

Ըստ առաջին սկզբունքի բոլոր ուղղագիծ-հավասարաչափ շարժվող (իներցիալ) սիստեմներում ֆիզիկական երևույթները տեղի են ունենում միևնույն ձևով։ Երկրորդ սկզբունքի համաձայն բոլոր ուղղագիծ-հավասարաչափ կերպով շարժվող սիստեմներում լույսի արագությունը հաստատուն է, անկախ լույս արձակող նյութական մարմնի արագությունից։ Առաջինը հանրահայտ գալիլեյան հարաբերականության մեխանիկական սկզբունքի տարածումն է էլեկտրադինամիկական երևույթների վրա, իսկ երկրորդը պնդում է լույսի արագության վերջավոր լինելու մասին։ Այս սկզբունքների վրա Ա. Էյնշտեյնը կառուցեց նոր մեխանիկա։ Նրան հայտնի էր փորձով ստացված լույսի արագության հաստատուն լինելը, ինչպես նաև արագ շարժվող մարմնի մասսայի և արագության կապը։ Էյնշտեյնը միայն լույսի արագության «C» հաստատունի մեջ ճանաչեց համաշխարհային կոնստանտը, որը կապեց էներգիան և մասսան, նյութը և դաշտը, ժամանակը և տարածությունը։ Մինչ Էյնշտեյնը ֆիզիկայի տեսանկյունից տարածությունը և ժամանակը համարվում էին բացարձակ։ Նոր տեսության համաձայն, դրանք հարաբերական են։ Բացարձակ է ժամանակի և տարածության որոշակի կոմբինացիան՝ քառաչափ տարածա-ժամանակային միջակայքը։

Ընդհանուր հարաբերականության տեսությունում Ա. Էյնշտեյնը հաշվի առավ մինչ այդ անտեսած գրավիտացիոն դաշտը։ Ընդհանուր տեսությունը ճշտեց մասնակի հարաբերականության տեսության հետևությունները։ Միմյանց հետ և շարժման հետ կապված ժամանակը և տարածությունը սերտորեն կապվեցին նաև ձգող մարմինների հետ, ցուցադրելով դիալեկտիկական մատերիալիզմի կողմից վաղօրոք արտահայտված այն միտքը, որ ժամանակը և տարածությունը շարժվող մատերիայի գոյության անհրաժեշտ և օբյեկտիվ ձևերն են։

Հարաբերականության տեսությունը ցույց տվեց ժամանակի «երկարացումը», տարածության «կարճացումը», «ժամանակի պարադոքսը»։ Նոր տեսության համաձայն միաժամանակությունը կարող է դրսևորվել որպես հաջորդականություն, իսկ հաջորդականությունը՝ որպես միաժամանակություն։

Ողջամտությանը հակասող, տարօրինակ թվացող այս հարցերի շուրջը ծավալվեց երկարատև պայքար, որովհետև դրանք խախտեցին դարերի ընթացքում ձևավորված մարդկային հասկացությունները։ Մենք չենք շոշափի այս հարցերի նեոպոզիտիվիստական ըմբռնումը, այլ միայն կանդրադառնանք ընդհանրապես հարաբերականության տեսության նեոպոզիտիվիստական ըմբռնմանը։ Հարաբերականության տեսության նորագույն և ընդհանրացած նեոպոզիտիվիստական մեկնաբանմանը մենք հանդիպում ենք վերջերս ռուսերեն լեզվով հրատարակված այդ հոսանքի պարագլուխ Ֆիլիպ Ֆրանկի (ԱՄՆ) մեծածավալ գրքում[1]։ Այդ աղբյուրը հետաքրքրական է մի շարք պատճառներով. Չսահմանափակվելով միայն հարաբերականության տեսությամբ, Ֆ. Ֆրանկը անդրադառնում է մաթեմատիկային, երկրաչափությանը, քվանտային մեխանիկային։ Նա քննարկում է փիլիսոփայության համար հետաքրքրություն ներկայացնող գրեթե բոլոր ֆիզիկական պրոբլեմները։ Բացի այդ, նա հանդես է գալիս որպես նեոպոզիտիվիստների հայացքների ընդհանրացնող։ Հարաբերականության տեսության մեկնաբանման ժամանակ Ֆրանկը հաշվի է առել Մ. Շլիկի, Հ. Ռայխենբախի, Բ. Ռասսելի, Ա. Ուայտխեդի, ինչպես նաև Ա.

---

[1] Ф. Франк, Философия науки, Москва, 1960.

էդինգտոնի, Պ. Բրիջմենի և ուրիշների՝ մատերիալիզմի դեմ մղած պայքարի հարուստ փորձը։

Հարաբերականության տեսության Ֆ. Ֆրանկի մեկնաբանության հիմքում դրված է ֆիզիկական տեսությունում «ձևական սխեմայի» և «ֆիզիկական մեկնաբանության» տարբերումը։

Ըստ Ֆրանկի, այդ «ձևական սխեմաները», ինչպես նաև աքսիոմներն ու սկզբունքները վերցված են ոչ թե փորձերի աշխարհից, այլ հիմնված են կամավոր պայմանավորվածության վրա։ Այստեղ նա ելնում է Ա. Պուանկարեի առաջ քաշած կոնվենցիոնալիզմից։ Ըստ Ֆ. Ֆրանկի, այդ «սխեմաները» վեր են ածվում տեսության միայն այն դեպքում, երբ նրանց ավելացվում են «ֆիզիկական մեկնաբանություններ» կամ այլ կերպ ասած՝ «օպերացիոնալ բնորոշումներ»։ Այդ նշանակում է, որ տեսության մեջ մտնող բոլոր հասկացությունները պետք է ստուգվեն «ֆիզիկական օպերացիաների» միջոցով։ Այս կապակցությամբ նեոպոզիտիվիստը կիրառում է, Պ. Բրիջմենի կողմից ձևավորված օպերացիոնալիզմը։ Մինչ Պ. Բրիջմենը օպերացիոնալիզմը տարածվում էր միայն ֆիզիկական հասկացությունների վրա։ Հետագայում այդ սահմանափակումը վերացավ և ֆիզիկական հասկացությանը փոխարինեց հասկացությունը ընդհանրապես։ Պարզ է, որ սրանով թերագնահատվեց վերացական դատողության նշանակությունը։

Կոնվենցիոնալիզմի և օպերացիոնալիզմի նորմաները հենված են ճշմարտության սուբյեկտիվ չափանիշների վրա։ Դրանք հետևյալներն են. «նկարագրման պարզությունը», «հարմարությունը», «կատարյալությունը» և այլն։

Ֆ. Ֆրանկն իր մեթոդոլոգիան ցուցադրելու համար անդրադառնում է դասական մեխանիկային։ Վերջինիս մոտ իներցիայի օրենքի նյուտոնյան բնորոշումը հնչում է անմիտ։ Ուժի և արագացման կապի հանրահայտ օրենքի օբյեկտիվությունը նա տեսնում է այդ օրենքի արտահայտման «պարզության» մեջ, և ոչ թե նրանում, թե այդ օրենքը համապատասխան արագություններում ապացուցվում է թե ոչ։ Մեկնաբանելով երկարության և ուղղագիծ-հավասարաչափ շարժման հասկացությունները, Ֆ. Ֆրանկը նշում է, որ դրանք զուրկ են «օպերացիոնալ բնույթից», ուստի և օբյեկտիվ իմաստից։ Բանը նրանում է, որ նեոպոզիտիվիզմի համար ճշմարտության չափանիշը մարդկային հասարակական պրակտիկան չէ։

Դժվար չէ նկատել, որ նեոպոզիտիվիզմը մատերիալիզմի դեմ պայքարելիս հենվում է իմացության մեջ եղած սուբյեկտիվ մոմենտի վրա և Ֆ. Ֆրանկը անում է ամեն ինչ, այն հնարավորին չափ օգտագործելու համար։

Եթե տեսությունը նոր հայտնագործությունների ճնշման տակ դադարում է բավարարել «փորձերի աշխարհին», ապա ըստ Ֆ. Ֆրանկի, կարելի է փոփոխել «ձևական սխեման», պահպանելով ֆիզիկական մեկնաբանությունը։ Կարելի է վարվել նաև հակառակ կերպ. պահպանել «սխեման» և փոփոխել «մեկնաբանությունը»։ Այս երկու քայլերը նա հավասարաչափ թույլատրելի է համարում։ Դրանք միմյանց հետ կապված չեն, և չեն թելադրվում անհրաժեշտությամբ։ Ճշմարտության չափանիշները նույնն են՝ «տրամաբանական անհակասականությունը», «նկարագրման միարժեքությունը», որոշ դեպքում՝ «օգտավետությունը»։

Բացատրելով Ա. Էյնշտեյնի անցումը գալիլեյան հարաբերականության սկզբունքից դեպի հարաբերականության նոր սկզբունքը, նեոպոզիտիվիզմի

պարագլուխը ներկայացնում է այն որպես ձևական սխեմայի փոփոխություն։ «Ձևական սխեմայի» նույնպիսի փոփոխություն է անվանվում նաև լույսի արագության անվերջ մեծ արժեքից գեպի նրա վերջնարժեքի անցումը։

Այլ կերպ ասած, էյնշտեյնյան սկզբունքները ներկայացվում են որպես արտաքին աշխարհում հիմք չունեցող կամավոր պայմանավորվածությունների վրա հենվող պնդումներ։ Գնահատելով այս սկզբունքները, Ֆ. Ֆրանկը գրում է, որ նրանք ինքնին վերցրած հակասական չեն, այլ հակասական կարող են դառնալ միայն այս կամ այն «ֆիզիկական մեկնաբանության» դեպքում։ Ի՞նչ է հասկանում նա այդ «մեկնաբանությունների» տակ։ Դա, ըստ նրա կամ նյուտոնյան մեխանիկայի ընդունումն է և եթերի հաստատումը, կամ էլ ռելյատիվիստական մեխանիկայի ընդունումը և եթերի ժխտումը։ Բայց չէ՞ որ այս կամ այն կոորդինատային ձևափոխությունները արտահայտում են նրանց հիմքում դրած «ձևական սխեմաները»։ Արագությունների գումարման նոր ռելյատիվիստական օրենքը մաթեմատիկորեն արտահայտում է էյնշտեյնյան սկզբունքները միաժամանակ։ Ըստ Ֆ. Ֆրանկի ստացվում է, որ տեսությունը հակասական է, երբ ժխտվում է նրա բովանդակությունը, և որ տեսությունը զուրկ է հակասությունից, երբ նրա բովանդակությունը ընդունված է։ Մեկ ուրիշ տեղ, այս կամ այն «ֆիզիկական մեկնաբանության» մասին խոսելիս նույն Ֆ. Ֆրանկը նշում է երկարության այս կամ այն «օպերացիոնալ բնորոշումը», որը կապված է չափման այս կամ այն հնարքի հետ։ Մենք գիտենք, որ ըստ հարաբերականության տեսության, միևնույն երկարությունը կարող է ունենալ բազմաթիվ մեծություններ տարբեր հաշվառման սիստեմներում, կախված հարաբերական շարժման արագության մեծությունից։ Տասնամյակներ շարունակ սուբյեկտիվ իդեալիզմը այս երևույթը մեկնաբանել է որպես չափման արդյունքի կախումը չափողի կամ դիտողի սուբյեկտիվ ցանկությունից։ Այս հին մտքին Ֆ. Ֆրանկը տալիս է օպերացիոնալ տեսք։ Այն է՝ երկարության բնորոշման երկու մեթոդներից՝ 1) «շարժվող մասշտաբի արագությունը ազդում է չափման արդյունքի վրա» և 2) «շարժվող մասշտաբի արագությունը չափման արդյունքի վրա չի ազդում», մեկն ու մեկի ընտրությունը կամայական է։ Այստեղ էյնշտեյնյան «ձևական սխեմաները» հակասական են, երբ ընդունվում է երկրորդ բնորոշումը, և անհակասական են առաջինի ընտրման դեպքում։

Պատմությունը կրկնվում է։ Նեոպոզիտիվիզմը անջատում է «ձևականը» և «օպերացիոնալը» միմյանցից և չի ընդունում նրանց կապը։ Իզուր է այստեղ փորձ արվում անջատել միմյանցից էյնշտեյնյան պոստուլատները, լորենցյան ձևափոխությունները, ռելյատիվիստական էֆեկտները և այլն։ Նրանք անխզելիորեն կապված են, արտահայտելով նոր տեսության ամբողջականությունը։ Էյնշտեյնյան սկզբունքները հակասական են, բայց ոչ թե այս կամ այն «ֆիզիկական մեկնաբանման» լույսի տակ, այլ հնացած դասական ժամանակա-տարածական պատկերացումների ներքո, որտեղ ժամանակն ու տարածությունը անջատվում են մատերիայից և նրա շարժումից։ Այս իրադրության խոստովանումը ուղղված կլիներ իդեալիզմի այն գաղափարախոսների դեմ, որոնց համար ժամանակն ու տարածությունը իբրև կատեգորիաներ լինելով սուբյեկտիվ, զուրկ են օբյեկտիվ բովանդակությունից։ Այս քայլը Ֆ. Ֆրանկը չի կարող անել, որովհետև օբյեկտիվության կատեգորիան (մատե-

ռիալիստական իմաստով) զուրկ է նրա մոտ իմացաբանական նշանակությունից։

Ինչի՞ց է բխում նեոպոզիտիվիզմի այս մեթոդոլոգիան։ Գիտության նպատակը նեոպոզիտիվիզմի համար կայանում է «պարզ տրամաբանական սիստեմների» և հարմար «բառաշաղկապությունների» որոնման մեջ։ Նեոպոզիտիվիզմի համար էյնշտեյնյան սկզբունքները սկզբից հիպոթետիկ և ապա կասկած չհարուցող օրենքներ չեն դեռևս։ Ըստ նրա, օրենքներն են սրանցից բխում։ Հետազոտությունը ցույց է տալիս, որ օրենքի կատեգորիան Ֆրանկի մոտ նույնն է, ինչ Մախի մոտ է, այսինքն՝ «զգայությունների կարգավորումը»։ Ի դեպ, ֆիզիկան ծանոթ չէ ոչ մի երևույթի, որը կժխտեր էյնշտեյնյան սկզբունքները այն կոնկրետ պայմանների համար, որոնց ասպարեզում նրանք հալտնագործված են։ Էյնշտեյնյան սկզբունքները ֆիզիկական օրենքներ են, որոնք բավարարում են օրենք կատեգորիայի բոլոր պահանջները։

Սխալ կլիներ նեոպոզիտիվիզմի մեկնաբանությունը համարել անհիմն։ Այն սնվում է հարաբերականության տեսության յուրահատկությունից։ Մասնակի հարաբերականության տեսությունը ելնում է երկու սկզբունքներից, որոնցից յուրաքանչյուրը արտացոլում է ֆիզիկական հարաբերությունների որոշակի կողմը, երկուսն էլ կրում են վերացական բնույթ, քանի որ նրանք վերացարկվում են մարմիններից, նյութից և դաշտից, շարժման տարատեսակությունից (մեխանիկական կամ էլեկտրադինամիկական)։ Մասնակի հարաբերականության տեսությունը վերացարկվում է փոխազդեցության բնույթից, գրավիտացիայից։ Մյուս կողմից այն ճշգրտումն է միաժամանակության, հաջորդականության, երկարության, ժամանակի, հոսքի և այլնի մասին եղած հայացքների։ Մի կողմից՝ քայլ դեպի աբստրակցիան, մյուս կողմից՝ մոտեցում դեպի կոնկրետը։ Այս է դիալեկտիկական մատերիալիզմի ըմբռնումը։ Մենք համոզվում ենք, որ նեոպոզիտիվիզմը միմյանցից անջատում է իմացության երկու անխզելիորեն կապված առանձին մոմենտները։ Ֆ. Ֆրանկի մոտ «ձևական սխեմաները» և «ֆիզիկական մեկնաբանությունները» առանձնացված են աստիճանների, որ նրանց կարելի է վերագրել ինքնուրույն գոյություն։

Այս քայլի նպատակն է համոզել ֆիզիկայի փիլիսոփայության հիմնական հարցի անմտությունը։ Այդ խնդիրն է հետապնդում ուսումնասիրվող «ձևական սխեմաների» և «ֆիզիկական մեկնաբանությունների» մեթոդոլոգիան։ Կոնվենցիոնալիզմի և օպերացիոնալիզմի սինթեզը նեոպոզիտիվիստին հնարավորություն է տալիս ճշմարտության սուբյեկտիվ չափանիշը կիրառել մարդկային իմացության բոլոր աստիճանների համար։

Ա. Էյնշտեյնի հարաբերականության հատուկ տեսության կառուցվածքը աքսիոմատիկ է։ Նա սկսվում է սկզբունքներից և ապա նրանց օբյեկտիվությունը հիմնավորում փորձերով։ Բայց դա չի նշանակում, որ այդ սկզբունքները կամայական են։ Նույն տեսությունը կարող է կառուցվել մեկ ուրիշ ձևով։

Լույսի արագության սկզբունքը կարող է փոխարինվել փորձով հաստատված մասսայի և արագության կապի օրենքով։ Լույսի արագության հաստատությունը կրխի որպես հետևանք։ Ուրեմն բանը նրանում չէ, թե ինչ փաստեր են դրվում տեսության հիմքում, այլ նրանում ժխտվում է արդյոք տեսությունը փորձով, թե ոչ։ Միայն փորձով ապացուցելիս արդարացվում է այս կամ այն պնդումը, այս կամ այն «օպերացիոնալ բնորոշումը», տեսության այս կամ այն կառուցումը։ Հայտնի է, որ ժամանակի հոսքի դանդաղումը ար-

դեն ապացուցված է փորձով, չէ՞ որ այդ հայտնագործությունը արվեց աբբստրրակտ դատողությամբ, կուտակված դժվարությունների նկատմամբ ռացիոնալ մոտեցման շնորհիվ։ Հարաբերականության մասնակի տեսության էյնշտեյնյան կառուցումը ելնում է հարաբերականից, և ապա գալիս դեպի բացարձակը։ Գոյություն ունի այդ տեսության հակառակ կառուցումը, որն ելնում է բացարձակից, գոյություն ունեցող պատճառ հետևությունների հարաբերությունից և ապա նոր գնում դեպի հարաբերականը։ Հարաբերականության մասնակի տեսության կողմից ժամանակի և տարածության դասական տեսության ժխտումը նույն կարգի է, ինչպես ընդհանուր հարաբերականության տեսության ժխտումը՝ մասնակիին։ Բայց վերջինի նկատմամբ նեոպոզիտիվիզմի լիդերը իր նորագույն մեթոդոլոգիան չգիտես ինչու չի կիրառում, սահմանափակվելով միայն մասնակի տեսությամբ։

Ֆ. Ֆրանկի «չեզոք» մեկնաբանությունը հաշվի է առել նեոպոզիտիվիզմի կողմից նախկինում թույլ տված զանցառությունները։ Ինչպես մենք տեսանք, Ա. Պուանկարեի կոնվենցիոնալիզմը հանդես եկավ որպես Ֆ. Ֆրանկի մեկնաբանության հենակետերից մեկը։ Բայց հարաբերականության սկզբունքը Ա. էյնշտեյնից անկախ և միաժամանակ «բնության համընդհանուր օրենք» է անվանել նույն Ա. Պուանկարեն։ Պ. Բրիջմենի օպերացիոնալիզմը նույն մեկնաբանության մյուս հենակետն է։ Բայց ոչ մի տեղ Ֆ. Ֆրանկը չի հիշատակում, որ Պ. Բրիջմենը հարաբերական տեսությունը մերժում էր։ Մերժում նրա համար, որ այն զուրկ է օպերացիոնալ իմաստից և պնդում է ռեալականության օբյեկտիվությունը։ Մենք համոզվեցինք, որ ռեալականությունը Ֆ. Ֆրանկի մոտ դեն է նետված, տեսությունը պահված է և օպերացիոնալացված։ Է. Մախի հետևորդ Ս. Շլիկը հարաբերականության տեսության իր մեկնաբանությամբ ձգտում էր հիմնավորել ռեալ եռաչափ ֆիզիկական տարածության սուբյեկտիվությունը։ Այս փաստը Ֆ. Ֆրանկը մոռացության է մատնել և չի հիշատակում։ Ժամանակի և տարածության հարաբերականության հիմնավորումը նեոպոզիտիվիզմի համար որպես նվաճում է հանդես գալիս ոչ թե օնտոլոգիայի, կամ «մետաֆիզիկայի» ասպարեզում, այլ միայն սեմանտիկայում և ոչ ավելին։

Հարաբերականության տեսության մեկնաբանման շուրջը անցյալում սկսած և դեռևս շարունակվող գաղափարական պայքարի՝ Ֆրանկի դնահատականը տրվում է միևնույն «չեզոք» դիրքերից։ Ըստ նրա այս տեսությունից, ինչպես նաև ցանկացած այլ տեսությունից չի բխում ոչ մի հետևություն, որը կհաստատեր մատերիալիզմի կամ իդեալիզմի այս կամ այն դրույթը։ Անցյալում առաջարկված մատերիալիստական և իդեալիստական սկզբունքային նշանակություն ունեցող մեկնաբանությունները, ժամանակակից նեոպոզիտիվիզմի լիդերը համարում է, այսպես կոչված, «մետաֆիզիկական իմպլիկացիաներ»։ Այդ նշանակում է, որ այդպիսի հետևությունները չեն հանդիսանում հարաբերականության տեսության տրամաբանական հետևություններ կամ ինդուկտիվ ընդհանրացումներ, այլ «փորձից» «դուրս եկած» բարոյական, կրոնական և քաղաքական նպատակներ հետապնդող հայտարարություններ։ Իր տեսակետը հիմնավորելու համար նա քննադատության է ենթարկում թե՛ բացահայտ իդեալիզմը և թե՛ մատերիալիզմը։ Քննադատվում են կենսարան Սինոտը, Հարվարդի համալսարանի սոցիոլոգ Պ. Սորոկինը, գերմանական ֆիզիկոս Յ. Շտարկը, անգլիական փիլիսոփաներ Գ. Կարը և Լ. Բարնետը։

Սինոտը քննադատվում է այն հավատի համար, որ իբր կրոնը այդ տեսության շնորհիվ երկարատև նահանջից հետո հնարավորություն ստացավ անցնել մատերիալիզմի դեմ հարձակման։ Պ. Սորոկինին Ֆ. Ֆրանկը քննադատում է այն կապակցությամբ, որ իբր Բերգսոնյան «զուտ տևականությունը» կատեգորիան (duree) և նոր տեսությունը չեն հակադրվում միմյանց։ Յ. Շտարկը մեղադրվում է նրանում, որ հարաբերականության տեսությունը նա համարում է «դոգմատիկ», քանի որ այն ելնում է երկու «դոգմաներից», այսինքն անձեռնմխելի սկզբունքից։ Գ. Կարը դիտողին կոորդինացնում է դիտարկվողի հետ։ Լ. Բարները նոր տեսության լույսի տակ ժամանակն ու տարածությունը համարում է «ինտուիցիայի ձևեր»։ Ֆ. Ֆրանկը չի միանում մատերիալիզմի դեմ ուղղված այն տեսակետներին, որոնց համաձայն ժամանակա-տարածական կոնտինուումի քառաչափությունը հերքում է ֆիզիկական տարածության ռեալականությունը։ Բերված և նման արգումենտներին նա չի միանում, նրանց մեջ իդեալիզմի բացահայտության պատճառով։ Այս քննադատությանը հատկանշական է այն, որ քննադատվում են բնագիտության փիլիսոփայության ոչ մասնագետները։ Բացի այդ քննադատվում են այն տեսակետները, որոնք ժամանակին հերքվել են մատերիալիզմի կողմից, իսկ մասամբ առաջ քաշվել նույն նեոպոզիտիվիզմի կողմից։ Այս քննատադության արգումենտները դեռևս վաղուց առաջ էին քաշվել մատերիալիզմի կողմից։ Եթե Ֆ. Ֆրանկը բացահայտում է իդեալիզմի նկատմամբ իր տեղյակ լինելը, ապա մատերիալիզմի նկատմամբ պատկերը հակառակն է։ Քողարկվում է մեր ֆիզիկոսների և փիլիսոփաների վաստակն այդ տեսության ճշտման, զարգացման և փիլիսոփայական մեկնաբանման գործում։ Ֆ. Ֆրանկը միակ օրինակի (Ա. Կ. Տիմիրյազևի) վրա ձգտում է համոզել, որ իբր մեր երկրում հարաբերականության տեսությունը մերժված է որպես իդեալիստական և ռեակցիոն տեսություն։

Ճիշտ է, որ սովետական փիլիսոփայության կազմավորման ժամանակաշրջանում, դիալեկտիկան չյուրացրած որոշ մեխանիստ-մատերիալիստներ, դժվարանալով բացատրել նոր տեսության իմացաբանական մոմենտները, հանդում էին տեսության ոչ ճիշտ լինելուն։ Դա վաղուց անցած էտապ է, իսկ առանձին ելույթներ չեն կարող փոխարինել հարաբերականության տեսության դիալեկտիկա-մատերիալիստական բարձր գնահատականին։ Ի՞նչ է ժամանակակից նեոպոզիտիվիզմի նպատակը. համոզել ընթերցողներին, որ հարաբերականության տեսությունը ի վիճակի չէ քիչ թե շատ լուսաբանել մատերիալիզմի և իդեալիզմի բանավեճը։ Ֆրանկի բերած օրինակներում ցույց է տրվում իդեալիստի կողմից տեսության ընդունումը և մատերիալիզմի քննադատությունը, մյուս կողմից նույն իդեալիստի կողմից տեսության մերժումը և նույնպիսի քննադատությունը մատերիալիզմի դեմ։ Նա խոսեց մատերիալիզմի կողմից տեսության մերժման մասին, լռության մատնելով կարևորագույն մոմենտը՝ մատերիալիզմի կողմից հարաբերականության տեսության ճանաչումը և ամեն տեսակի իդեալիզմի քննադատությունը։ Գաղափարական պայքարին իր մոտեցումով նա ցուցադրում է Բ. Ռասսելից ցիտվող այն միտքը, որ ամեն մի փիլիսոփայի մոտ նկատվում է միևնույն ձգտումը՝ յուրօրինակ մեկնաբանել էյնշտեյնի տեսությունը։ Դժվար չէ ցույց տալ, որ նրա մեջբերումները ուղղված են նաև նույն նեոպոզիտիվիզմի դեմ։ Նա ինքն է հայտարարում, որ պաշտպանում է «չեզոք», անաչառ փիլիսոփայությունը։ Ինքն է

մշակում հարաբերականության տեսության «չեզոք» մեկնաբանությունը։ Ֆ. Ֆրանկը խոստովանում է, որ նախկինում մատերիալիզմի դեմ ուղղված մեկնաբանությունները և նկատառումներն այսօր հնչում են ծիծաղելի։ Նա մերժում է մատերիայի օբյեկտիվության գաղափարը այն դիրքից, որ սուբյեկտիվի և օբյեկտիվի տարբերումն անօրինական է։ Եթե այս բոլորին գումարենք հոդվածի առաջին մասում ցույց տրված նրա մեկնաբանությունը, ապա ակնհայտ կդառնա նույն մատերիալիզմի դեմ նույնպիսի պայքարը, բայց արդեն նոր պայմաններում։

Հիմնականում ժխտելով հարաբերականության տեսության լույսի տակ մատերիալիզմի դեմ ուղղված բացահայտ իդեալիզմի արգումենտները, Ֆ. Ֆրանկը որոշ տեղերում բացատրում է, թե ի՞նչ մտքով է հերքվում մատերիալիզմը։ Պարզվում է, որ մատերիան վերածվում է «ոչ նյութական էության» էներգիայի։ Մատերիալիզմը հերքվում է նրանով, որ ատոմային միջուկների «խտացման» դեպքում մատերիան չքանում է, քանի որ անհետանում է մասսան։ Մատերիալիզմը ժխտվում է նաև նրանով, որ միաժամանակության հարաբերականության հետևանքով չկա որևէ որոշակի ներկա մոմենտ, որի ընթացքում ամբողջ մատերիան լիներ միաժամանակ ռեալ։ Նա քննադատում է անկատարյալ, մետաֆիզիկական մատերիալիզմը։ Գուցե հարաբերականության տեսությունը մեխանիկական մատերիալիզմի հերքման հետ մեկտեղ հիմնավորում է դիալեկտիկական մատերիալիզմը։ Պարզվում է, որ ոչ, որովհետև նրանք իրարից չեն տարբերվում։ Ֆ. Ֆրանկը նույնիսկ աղավաղում է փիլիսոփայության հիմնական հարցի մատերիալիզմի լուծման իմաստը, որն հայտնի էր դեռևս Մ. Շլիկին։

Կարելի էր կարծել, որ բուրժուական գաղափարախոսը իրոք հեռու է դիալեկտիկական մատերիալիզմից։ Այդ դեպքում դժվար է բացատրել նեոպոզիտիվիզմի էվոլյուցիան, որը որոշակի կերպով հաշվի է առել դիալեկտիկա-մատերիալիստական քննադատությունը։ Կարելի է ենթադրել նաև, որ դիալեկտիկական մատերիալիզմը մետաֆիզիկական մատերիալիզմով փոխարինումը ուղղված է դեպի գաղափարական պայքարի հեշտացումը։ Կարելի է ենթադրել երրորդը։ Մեր ուսումնասիրության օբյեկտ՝ Ֆիլիպ Ֆրանկի «Գիտության փիլիսոփայությունն» մեծածավալ աշխատությունը գրված է փիլիսոփայությամբ չհետաքրքրվող «համաքաղաքացիների» լայն մասսաների համար։ Ինչ խոսք, որ նրան ձեռնտու չէ ցույց տալ դիալեկտիկական մատերիալիզմի իսկական բնագծերը, որն կմերկացներ նեոպոզիտիվիզմը իրենց նույն տեղում։ Այս բոլորը վկայում են այն մասին, որ ռեակցիոն փիլիսոփայությունն անտարբեր չմնալով փոփոխվող սոցիալական պայմաններին ի վիճակի է փոփոխել իր ձևը, սնվելով գիտության առաջընթացի դժվարություններից։

О. А. АДИБЕКЯН

СОВРЕМЕННЫЙ НЕОПОЗИТИВИЗМ И ТЕОРИЯ ОТНОСИТЕЛЬНОСТИ

Резюме

Современный неопозитивизм в подходе к теории относительности критикует как откровенный идеализм, так и материализм. Выдвигая «беспристрастную», «нейтральную» интерпретацию, современный неопо-

зитивизм стремится «преодолеть» ограниченность идеализма и материализма. Исследование современно-неопозитивистской интерпретации теории относительности и сравнение ее с откровенно-идеалистическими показывает преемственность указанных интерпретаций, определенные заимствования из старых доводов и стремление скрыть такое заимствование.

Современно-неопозитивистская интерпретация теории относительности покоится на конвенционализме и операционализме. Этим абсолютизируются отдельные моменты познания и облегчается применение субъективных критериев истинности. Борьба с современно-неопозитивистским толкованием теории относительности это борьба с операционализмом и конвенционализмом. Она оказывается успешной при систематизации идеалистических интерпретаций теории и учете эволюции того же неопозитивизма.